նորդ Մկրտիչ վրդ.ին կոնդակներ կուտան, որպէսզի նպաստներ հաւաքելով նորոգութիւններ կատարէ աւերեալ վանքին մէջ։ Կթղ.ին գրած կոնդակին մէջ Դաւիթ եպս.ի նկատմամբ հետևեալ տողերը կը գտնուին. «Նա ևս ժամանակաւ ոմն հայր սուրբ անապատիս, հեզահոգի աստուածաբան վարդապետն Դաւիթ բազում ընծայիւք գնացեալ ի սուրբ Երուսաղէմ ուխտ և երկրպագութիւն տնօրինականացն տեղեացն Քրիստոսի և կատարեալ զուխտն իւր և պատրիարգ այնմ ժամանակին բազում հարկիս և մեծարանս առնէ նմա և ի դառնալն նորին չնորհէ բազում նշխարս սրբոց և մաս մի ի կափարիչ վիմէն, և նա բերեալ ի սուրբ անապատն, որ կայ մինչև ցայսօր և առնեն բազում սքանչելիս, ի հիւանդս և ցաւագնեալս.» (Արձագանգ. 1776, էջ 340)։ Դաւիթ եպս. վախճանած է իր անապատին մէջ և թաղուած տաճարին արևելակողմը՝ պարսպին մէջ (Դաւրիժեցի, էջ 253—254) և իր տապանագիրն է հետևեալը. «Այս է հանգիստ Դաւիթ եպս.ին, որ փոխեցաւ առ Քրիստոս թվ. ՌՂԵ» (=1646) (Արձագանգ, 1886 էջ 330)։

Ե

ԵՂԻՇԷ ԵՊՍ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ.— (Տե՛ս էջ 126). կը վախճանի 1929 փետր. 7ին և կը թաղուի Սիոնի գերեզմանատունը. Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու Երուսաղէմի մէջ կրկնայարկ մթերանոցի մը $^{2}/_{5}$ մասը, ինչպէս նաև նորաշէն յարկաբաժինի մը $^{5}/_{45}$ բաժինը։

ԵՍԱՅԻ (ՄՀՏ.) ՂԶԼԱՐՅԻ.— Ուխտաւորութեամբ այցելած է Ս. Յակոբի վանքը և անոր նուիրած է 10,000 դահեկան (Արձագր. Տն. Ժողովի, 1879, էջ 364)։

ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. ՄԱՐԳԱՐԵԱՆ.— (Տե՛ս էջ 134). 1728ին Պալատի Ս. Հրեշտակապետ եկեղեցիին մէջ քահանայական ձեռնադրութիւն մը կը կատարէ. ձեռնադրեալը՝ Յակոբ քհ.՝ Աւետարանի մը մէջ (տպ. Պոլիս, ՌՃԾԹ (=1710) հետևեալ յիշատակարանը կը գրէ. «Այս... ինձի օժտեց, ես սարկաւագ ի քէն, գահանա ձեռնադրվեցայ Հրշտակապետ եկեղեցին Յերուսաղէմցի յերեմիա վարդապետէն, թըւին Հայոց ՌՃՀԷ